ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 ապրիլի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

54
(2904)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՌՈՂՋԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԵՐԸ

Հայաստանի արգելքը վրացական համարանիշների վերաբերյալ այնքան խորացավ նախորդ տարեվերջին, որ չնկատեցինք, թե մեզ համար Վրաստանն ինչ օրենք ընդունեց: Բանն այն է, որ 2024 թվականի հունիսի 1-ից Վրաստանում արտասահմանցիների համար պարտադիր կդառնա կյանքի եւ առողջության ապահովագրությունը, որն ապահովելու է զբոսաշրջիկի համար անհրաժեշտ բուժօգնության տրամադրումը եւ դժբախտ պատահարներից ապահովագրումը: Այսինքն՝ ցանկացած օտարերկրացի, որը ցանկանում է մեկնել Վրաստան, անկախ այցի նպատակից, անպայման պետք է ունենա նշյալ ապահովագրությունը: Հակառակ դեպքում՝ յուրաքանչյուր չապահովագրված անձի համար կիրառվելու է տուգանք՝ 300 լարիի չափով (մոտ 46 հազար դրամ): Այս մասին ՀՀ քաղաքացիները չեն ծանուցվել, եւ ոչ մի իրավասու կառույց չի պատրաստվում զգուշացնել այս օրենքի կարգավորման կամ առնվազն գոյության մասին: ՀՀ առողջապահության նախարարությունից փորձեցինք տեղեկանալ, թե պարտադիր առողջապահական ապահովագրության ներդրումը արդյոք կվերաբերի՞ եւ պարտադիր կլինի՞ ոչ ՀՀ քաղաքացիների համար:

Նախարարությունից մեզ փոխանցեցին. «Հայաստանում աշխատող կամ ինքնազբաղված ոչ ՀՀ քաղաքացիների համար առողջության համապարփակ ապահովագրությունը, ըստ օրենքի նախագծի, լինելու է պարտադիր: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման վերջին փուլը նախատեսվում է ավարտել 2027 թվականին»: Առողջապահության նախարարությունից տեղեկանում ենք նաեւ, որ մինչ 2027 թվականի պարտադիր առողջապահական ապահովագրության նախագծի մեջ մտնում են նաեւ մինչեւ 18 տարեկան երեխաների, անժամկետ հաշմանդամություն ունեցողների, 63 եւ դրանից բարձր տարիքի անձանց, մինչեւ 2 տարեկան երեխաների ապահովագրությունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախագիծը որքան էլ օգտակար է թվում, այնքան էլ ունի մի շարք բացեր եւ խնդիրներ: Անհայտ է, թե մինչեւ որքան դրամ կարող է փոխհատուցել նախարարությունը. նախատեսվում է տարեկան պարտադիր առողջապահական ապահովագրության համար վճարել 164 հազար 400 դրամ: Նախագծով կարգավորվում է նաեւ, որ ապահովագրության համար վճարվող գումարը չմուծելու դեպքում տուգանվելու է եւ՛ անձը, եւ՛ գործատուն: Բազմիցս արձանագրված առողջապահական այս նախագծի առաջացնելիք խնդիրներն անվերջ են. ավելի ուշ դրանց կանդրադառնանք: Այժմ հարկ է նշել, որ այս խնդիրները արձանագրվել են նաեւ Հայաստանում Ասիական զարգացման բանկի կողմից, որի 2024 թվականի կանխատեսումների մեծ մասը վերաբերում էին հենց առողջապահական ոլորտին, որի մասին նախկինում գրել ենք:



Նիկոլ Փաշինյանը տարբեր պատճառաբանություններով արդեն տեւական ժամանակ է, ինչ հետաձգում է ՔՊ-ական պատգամավորների հետ հանդիպումը: Դեռ ապրիլի 5-ի բրյուսելյան հանդիպումից հետո ՔՊ-ական պատգամավորները սպասում էին Նիկոլ Փաշինյանին, որ գնա ԱԺ եւ փակ հանդիպման ժամանակ վերջապես տա իրենց հուզող հարցերի պատասխանները: Փաշինյանն էլ ամեն անգամ, զբաղվածության պատճառաբանությամբ, խուսափում է փակ հանդիպումից: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՔՊ-ական պատգամավորներն անգամ դիմել են խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանին, որ վերջինս կազմակերպի հանդիպումը. նա էլ իր հերթին է ասել, որ վարչապետը զբաղված է, բայց վստահեցրել է՝ առաջիկայում կգա հանդիպման: Հավանաբար, արդյունքները Փաշինյանի համար եւս գոհացուցիչ չեն եղել ու չգիտի՝ ինչ ներկայացնի պատգամավորներին, այդ պատճառով էլ խուսափում է հանդիպումներից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ապրիլի 12-ին տեղի ունեցած «Ուրալ»-ի վթարի գործով ՀՀ ՊՆ պաշտոնյաների պատասխանատվության ենթարկելու հարց է բարձրացվել իրավապահների կողմից: Չի բացառվում, որ ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնյաների կալանավորի, քանի որ վթարը 4 զինվորի կյանք է խլել, որոնցից որեւէ մեկը սաղավարտ չի կրել: Հիշեցնենք՝ ՀՀ քննչական կոմիտեն տեղեկացրել էր, որ 2024 թ. ապրիլի 12-ին ՀՀ ՊՆ հաշվեկշռում գտնվող «Ուրալ» մակնիշի ավտոմեքենայի վթարման, դրա հետեւանքով 4 զինծառայողների մահվան եւ մի շարք զինծառայողների տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներ ստանալու դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժնում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 4-րդ մասի (Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ) հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշված քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է, ողբերգական ելքով դեպքի հանգամանքները ամբողջությամբ պարզելու ուղղությամբ իրականացվում են մեծածավալ քննչական եւ վարութային գործողություններ: Մասնավորապես՝ առգրավվել են ավտոմեքենայի շահագործման պահանջներին, տրանսպորտային միջոցի տեխնիկական ընդհանուր վիճակին, շահագործելիությանը վերաբերող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Հարցաքննվել են երկու տասնյակից ավելի անձինք՝ ինչպես զինծառայողներ, այնպես էլ հրամանատարական կազմի ներկայացուցիչներ, զորամասի տրանսպորտային միջոցների անվտանգության եւ պահպանության համար պատասխանատուներ:



Ոստիկաններն իրենց մասնագիտական օրով «փայլեցին» բռնարարքներով. ՔՊ պատգամավորին վիրավորած քաղաքացին ոչ միայն ձերբակալվեց, այլեւ, պահման վայր ուղեկցելու ճանապարհին, նրան դիմակավորվածները դաժան ծեծի ենթարկեցին, նսեմացրին, խոշտանգեցին: Ալեն Սիմոնյանին կարելի է թքել ու մնալ անպատիժ, իսկ ընդդիմադիր քաղաքացուն ազատազրկում են, ապա ծեծում սեփական կարծիքի արտահայտման համար: Երեկ ԱԺ ՔՊ պատգամավոր Հակոբ Ասլանյանի եւ քաղաքացի Սամվել Վարդանյանի միջեւ եղած միջադեպը կրկին բորբոքել է իշխանական կրքերը: Միջադեպից անմիջապես հետո Հակոբ Ասլանյանը ArmLur.am-ի հետ զրույցում նշել էր, որ քաղաքացու դեմ բողոք չի ներկայացնի, սակայն քաղաքական որոշման արդյունքում նա բողոք գրեց ոստիկանությունում: Մինչդեռ քաղաքացի Կարեն Մկրտչյանի վրա թքած Ալեն Սիմոնյանը, եւ ուղիղ եթերում օմբուդսմենի ընդդիմադիր թեկնածուի հասցեին սպառնալիքներ հնչեցրած Արթուր Հովհաննիսյանը, որ խուլիգանություններ են դրսեւորել, նախօրեին խրոխտ դատապարտեցին քաղաքացու այդ քայլը: Նրանց հորդորով՝ Քննչական կոմիտեում հաղորդում ներկայացվեց քաղաքացի Սամվել Վարդանյանի դեմ: Սամվելին ձերբակալելու որոշում կայացվեց եւ ՁՊՎ տեղափոխելու ճանապարհին նրան դաժան ծեծի ենթարկեցին դիմակավորված մարդիկ՝ հասցնելով ոչ միայն ֆիզիկական, այլ նաեւ սեռական, հոգեբանական բռնություն՝ այդ ամենը հայհոյանքներով ուղեկցելով: Երեկ փաստաբանները տեղեկացրել են, որ ծեծելուց հետո քաղաքացի Սամվելի գլուխը բարձրացրել են ծեծած դիմակավոր անձինք եւ միասին թքել են նրա վրա. շատ ծանոթ ձեռագիր է, չէ՞: «Դավաճան վիժվածք» արտայատությունն արած քաղաքացին դաժանաբար խոշտանգվում եւ բռնության է ենթարկվում, իսկ քաղաքացու վրա թքած ԱԺ նախագահը, սպառնացող ՔՊ քարտուղարը, դառնում են անպատժելի արտոնյալներ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ՏԵՂՅԱԿ ՉԵՄ, ՈՐ ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ»

Երեկ հայտնի դարձավ, որ 1 օր առաջ ՔՊ-ական պատգամավոր Հակոբ Ասլանյանի հետ վիճաբանության բռնված Սամվել Վարդանյանը դաժան ծեծի է ենթարկվել դիմակավոր անձանց կողմից:

Այս մասին ահազանգել են նրա պաշտպանները:

ArmLur.am-ը հետաքրքրվեց Սերգեյ Բագրատյանից՝ ինչ վերաբերմունք ունի առ այն, որ իշխանության ներկայացուցչի հետ վիճաբանության բռնված քաղաքացուն ծեծի են ենթարկում, տեղյակ է արդյոք՝ ովքեր են քաղաքացուն ծեծի ենթարկած անձինք:

-Ես տեղյակ չեմ՝ ովքեր են, բայց փորձաքննություն եղե՞լ է, որ ծեծել են քաղաքացուն:

-Փաստաբաններն են ահազանգել, պարոն Բագրատյան:

-Փաստաբաններն այդ պահին այնտեղ եղե՞լ են:

-Այդ պահին այնտեղ չեն եղել, բայց քաղաքացուն տեսակցել են ու ահազանգել: Ինչպե՞ս է ստացվում, որ հենց պատգամավորի հետ վիճաբանության բռնվելուն է հաջորդում այս միջադեպը:

-Ո՞վ է ներկա եղել, որ իշխանությունները կապ ունեն դրա հետ, որեւէ մեկը ներկա եղե՞լ է... Չգիտեմ, ես չեմ լսել այդ մասին:

ArmLur.am-ը ՔՊ-ական պատգամավոր Հակոբ Ասլանյանից եւս հետաքրքրվեց՝ տեղյակ է արդյոք, ովքեր են ծեծի ենթարկածները, ինչպես ստացվեց, որ հենց իր հետ ընդհարումից մեկ օր անց քաղաքացուն ծեծել են.

«Ես երբուղայինում եմ, չեզանից եմ լսում, որ ծեծի են ենթարկել:

Я тут прочем»:

Զրուցեց ԶՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾԸ «ԲԵՍՊՐԵԴԵԼ» Է

ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԵՏՔ Է ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ադօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Քիչ առաջ ԱԺ մի խումբ պատգամավորների հետ տեսակցեցի ոստիկանական բանդայի թողտվությամբ (կամ հենց նրանց կողմից) ծեծի ենթարկված քաղաքացի Սամվել Վարդանյանին:

Նա գտնվում է ՀՀ ոստիկանության Ձերբակալվածների պահման վայրում: 72 ժամվա ընթացքում պետք է նրան կա՛մ ազատ արձակեն, կա՛մ կալանավորեն, ինչի հիմքերը չկան:

Բայց այն, ինչ տեղի է ունեցել քաղաքացու հետ ՀՀ քննչական կոմիտեից դեպի ՁՊՎ տանելու ճանապարհին, դուրս է մարդկային երեւակայությունից:

Սամվելը ոստիկանական մեքենայում եղել է ձեռնաշղթաներով, նրան ուղեկցողները շարժվելուց 300 մետր հեռավորության վրա բնական կարիքները բավարարելու պատճառաբանությամբ կանգնեցրել են ավտոմեքենան, իջել են, ձերբակալվածին թողել միայնակ մեքենայի մեջ:

Վայրկյաններ անց բացվել է դուռը, երկու քաղաքացիական հագուստով դիմակավորվածներ նրան քարշ տալով իջեցրել են մեքենայից, բացառապես մի մութ տարածքում, որտեղ ոչինչ տեսանելի չի եղել մայրաքաղաք Երեւանում, տապալել են գետնին, հայհոյել, սպառնացել, ծեծի ենթարկել, խոշտանգել, նվաստացրել նրա արժանապատվությունը ամենազզվելի ձեւով, ապա բառացիորեն հետ են նետել ավտոմեքենայի մեջ:

2 րոպե անց ուղեկցող ոստիկանները եկել են՝ ասես ոչինչ չի եղել ու նստել ավտոմեքենան՝ շարունակելով ճանապարհը: Իհարկե, հետաքրքրվել են, թե ինչու է հեւում Սամվելը, սակայն անխռով տարել են նրան ժամանակավոր պահման վայր:

Տեղի ունեցածը «բեսպրեդել» է, նույնիսկ եթե ՔՊ պատգամավորը ամենադաժան ձեւով վիրավորված լինի: Դրա համար կա քաղաքացիական օրենսգրքում նախատեսված պատժամիջոց:

Արդեն քաղաքացուն ձերբակալել են, խուլիգանության հոդվածը առաջադրել, ազատազրկել, բայց նաեւ ծեծի են ենթարկել շղթայված երիտասարդին, նսեմացրել նրա արժանապատվությունը:

Սա անթույլատրելի է, դատապարտելի եւ պետք է խստագույնս պատժվի:

Հայաստանում հավատարմագրված դեսպանատներին, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող համաշխարհային կառույցներին արդեն ուղարկել եմ գրություններ այս առիթով: Քաղաքացուն ուղեկցող ոստիկանները եւ զինված բանդան պե՛տք է պատժվեն»:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 200

18.10.2018թ., ճեպազրույցի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Ես արդեն հայտնել եմ, որ Հայաստանում օլիգարխներ չկան»: Այնուհետեւ՝ 30.11.2018թ., նախընտրական քարոզարշավի շրջանակներում Հրազդանում հայտարարեց. «Երբեմնի օլիգարխիան զրկված է կառավարության որոշումների վրա ազդեցության բոլոր լծակներից»: Սակայն իրականում հենց իր խմբակցության ներսում կան գործարարներ, որոնք ուղիղ ազդում են իշխող ուժի որոշումների վրա: Բացի դրանից, օրինակ, Գուրգեն Արսենյանը բազմիցս հայտարարել է, որ. «մենք ընդունել ենք այս որոշումը կամ այն որոշումը»: Այսինքն՝ գործարար պատգամավորը խոստովանել է, որ ինքը, լինելով գործարար, մասնակից է կառավարական որոշումների կայացմանը: Բացի դրանից, «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, որ այսօր կա, օրինակ, մեկ այլ գործարար, որի մասին նախկինում ոչինչ հայտնի չէր, մեկ էլ հանկարծ լսում ենք՝ Նարեկ Նալբանդյան անուն ազգանունը, որը պետությունից «փակովի» տարբերակով գնում է նախկին ՊԵԿ նախագահի՝ պետությանը նվիրաբերած «Գոլդեն Փելես» հյուրանոցային համալիրը: Հետո լսեցինք, որ նա գնել է նաեւ ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանի ոսկեզօծ տունը՝ դարձյալ ամիս-ամիս «փակովի» տարբերակով: Նիկոլ Փաշինյանն էլ հաճախ հայտնվում է իր ստեղծած օլիգարխի այս կամ այն օբյեկտի բացման արարողությանը:

Բա ասում էիք՝ օլիգարխներ չկան այլեւս. այո, կան, բայց այլ դեմքերով:

ՆՎԻՐԵԼ ԵՆ ՀԱՅԵՐԻՆ

Ամստերդամում տեղի է ունեցել Սուրբ Հոգու հայկական եկեղեցուն նոր զանգի հանձնման հանդիսավոր արարողությունը: Զանգը նվիրատվություն է Ուկրաինայի հայերի միության կողմից, հայտնում է AnalitikaUA-ն:

«Տեղի ունեցավ զանգի լվացման արարողությունը, որը վարեց տաճարի առաջնորդ Տեր Տարոն Թադեւոսյանը: Ծեսը, որը նախորդում է զանգի օծման գործողությանը, խորհրդանշում է զանգի մաքրումն ու պատրաստումն օգտագործմանը:

Արարողությանը ներկա էին Ուկրաինայի հայերի միության բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ ՈՒՀՄ նախագահ Վիլեն Շատվորյանը, ՈՒՀՄ շտաբի ղեկավար Դավիթ Մկրտչյանը, ՈՒՀՄ Խերսոնի ղեկավար Տիգրան Մկրտչյանը: Մասնակցում էին նաեւ ՈՒՀՄ ակտիվիստներ Արսեն Մելքումյանը՝ Ուժգորոդից եւ Լեւոն Ղուլյանը՝ Օդեսայից: Միջոցառումը տեղի ունեցավ Ամստերդամի հայկական համայնքի անդամների մասնակցությամբ»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ Ուկրաինայի հայերի միությունը ջանքեր է գործադրում ամբողջ աշխարհում հայկական մշակույթը պահպանելու եւ հանրահռչակելու համար: Ուստի, Ամստերդամի հայկական եկեղեցուն նոր զանգի փոխանցումը կարեւոր իրադարձություն է ոչ միայն տեղի համայնքի, այլեւ ողջ հայ ժողովրդի համար:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱՆԱԴԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԱԳԵՏԸ

Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի Ջոլին ողջունել է առաջին կանադացի փորձագետ Ալեքսանդր Գրուշեւսկու միանալը՝ Հայաստանում Եվրոպական Միության դիտորդական առաքելությանը:

Այս մասին Կանադայի ԱԳ նախարարը գրառում է կատարել X-ի իր միկրոբլոգում:

«Վերադառնալով անցյալ տարվա իմ այցից (խմբ. 2023 թվականին այցելել է Հայաստան)՝ առանցքային առաջնահերթություն էր Հարավային Կովկասում կայունության եւ անվտանգության ապահովման ուղիների ուսումնասիրությունը, ներառյալ Հայաստանի տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքը: Ողջունում ենք մեր առաջին փորձագետ Ալեքսանդր Գրուշեւսկու միանալը Հայաստանում Եվրոպական Միության դիտորդական առաքելությանը»,- նշել է նա:

Նախօրեին հայտնի դարձավ, որ Հայաստանում գործող Եվրոպական Միության դիտորդական առաքելությանն է միացել առաջին կանադացի մասնագետը:

2023 թվականի հոկտեմբերին Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի Ջոլիի՝ Հայաստան կատարած այցի ընթացքում հայտարարվեց, որ Կանադան կմիանա Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելությանը: Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը հայտնել էր, որ Կանադան ԵՄ առաքելությանը միանալու համար 2 փորձագետ կուղարկի:

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է ՈՐՈՇՄԱՆԸ

Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյին անդրադարձել է օգոստոսի 3-ը եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու նախագծի ընդունմանը Ազգային ժողովում:

«Հայաստանի Ազգային ժողովը եզդիների ցեղասպանության հիշատակի օրը ներառել է իր ազգային օրացույցում: Մեկ դար տարբերությամբ եզդիների նահատակությունը կրկնությունն է հայերի 1915 թվականի նահատակության: Հպարտ եմ, որ այս պատմական օրը ներկայացրել եմ Ֆրանսիան Ազգային ժողովի դահլիճում»,- նշել է Դըկոտինյին:

ԱՄՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանն ապրիլի 16-ին մասնակցել է ԱՄՆ դեսպանատան նախաձեռնությամբ ԱՄՆ արդարադատության նախարարության միջազգային օգնության գրասենյակի (OIA) եւ ԱՄՆ պետդեպարտամենտի իրավական խորհրդատուի գրասենյակի պատվիրակության այցի շրջանակներում Երեւանում անցկացվող, իրավական փոխօգնության հարցումներին վերաբերող երկօրյա վերապատրաստման դասընթացի բացման արարողությանը:

Ինչպես տեղեկացնում են ՀՀ քննչական կոմիտեից, վերապատրաստումն ուղղված է ԱՄՆ իրավասու մարմիններին իրավական փոխօգնության հարցումներով դիմելու ոլորտում ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ դատախազության եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների հմտությունների կատարելագործմանը, նման հարցումներին ներկայացվող պահանջների, հարցումների ներկայացման եւ դրանց լուծման ընթացակարգերի վերաբերյալ օգտակար տեղեկատվության եւ փորձառության տրամադրմանը:

Ըստ աղբյուրի՝ բացման արարողությանը մասնակցել են նաեւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության գրասենյակի տնօրեն Ալեքսիս Հաֆտվանին, ինչպես նաեւ ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչները:

Նշվում է, որ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանն իր խոսքում կարեւորել է նման դասընթացի անցկացումը քրեական վարույթներով ՀՀ եւ ԱՄՆ իրավապահ մարմինների միջեւ համագործակցության սերտացման, իրավական փոխօգնության խնդրանքների կատարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Արսեն Այվազյանը նկատել է, որ այդ հարցում հմտությունների զարգացման անհրաժեշտությունը բխում է ՀՀ իրավասու մարմինների կարիքներից, իսկ ստացած գիտելիքների գործնական կիրառումը կնպաստի հատկապես անդրազգային բնույթ կրող հանցագործությունների, մասնավորապես՝ փողերի լվացման, թմրանյութերի ապօրինի շրջանառության, ապօրինի միգրացիայի դեպքերով նախաքննության արդյունավետությանը եւ արագությանը: Նա հույս է հայտնել, որ նման նախաձեռնությունները կլինեն շարունակական՝ վերահաստատելով դրանց՝ ՀՀ քննչական կոմիտեի շահագրգիռ ներգրավվածության պատրաստակամությունը:

Երկօրյա դասընթացին մասնակցում են ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի պետ Անուշ Գասպարյանը, ինչպես նաեւ ՀՀ ՔԿ տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների ինքնավար պաշտոններ զբաղեցնող 16 անձինք:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՅՑԵԼԻ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն ապրիլի 17-18-ը պաշտոնական այցով գտնվելու է Սաուդյան Արաբիայի Թագավորությունում. 2023թ. նոյեմբերին երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո սա Հայաստանից առաջին բարձրաստիճան այցն է Սաուդյան Արաբիա:

Այս մասին հայտնել է Հայաստանի ԱԳՆ մամուլի քարտուղար Անի Բադալյանը:

Այցի շրջանակներում նախարար Միրզոյանը հանդիպում կունենա Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար արքայազն Ֆեյսալ բին Ֆարհան Ալ Սաուդի հետ:

Նախատեսված են Սաուդյան Արաբիայի գործընկերների հետ նաեւ այլ հանդիպումներ:

ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ՝ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ

Երեւանի քաղաքապետարանը դիտարկում է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ձմեռային ամիսներին ասֆալտապատման աշխատանքներ իրականացնելու հարցը:

Այս մասին Երեւանի ավագանու ապրիլի 16-ի հերթական նիստում ասաց քաղաքապետի տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը:

«Հիմնական խնդիրն այն է, որ փոսալցման աշխատանքների մասով մրցույթները պետք է այնպես կազմակերպվեն, որպեսզի կայանան ժամանակին, եւ գարնան սկզբին արդեն լինեն հաղթող կազմակերպություններ»,-հավելեց Հովհաննիսյանը:

Ըստ գործող նորմերի՝ ասֆալտապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է + 5 աստիճան եւ ավելի բարձր ջերմաստիճանի միջավայր:

«Մենք գտնվում ենք այնպիսի գոտում, որ հաճախ դեկտեմբեր, հունվար եւ փետրվար ամիսներին այդ պայմաններն ուղղակի հնարավոր չէ պահել: Հենց այդ նպատակով հիմա ուսումնասիրում ենք նոր տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառումը, այսինքն՝ այնպիսի ծառայություններ, ասֆալտապատման աշխատանքներ ձեռք բերենք, որոնց իրականացումը ցուրտ ամիսներին կամ ձնհալի ժամանակ հնարավորություն կստեղծի, որպեսզի մեր փողոցները լինեն երթեւեկելի»,-ասաց փոխքաղաքապետը՝ հավելելով, որ փորձ է արվում հաջորդ տարվա համար այդ խնդիրը նաեւ այլ մոտեցումներով լուծել եւ ավելի լավ արդյունքներ ստանալ:

Ըստ Հովհաննիսյանի՝ Հայաստանում մինչ այժմ նման տեխնոլոգիաներ չեն կիրառվել, եւ, երբ վստահ լինեն, որ դրանք թույլ են տալիս ձմռան ամիսներին իրականացնել ասֆալտապատման աշխատանքներ ու կիրառելի են Երեւանում, ձմռան ամիսներին այլ տեսակի ասֆալտապատման ծառայություններ կպատվիրեն:

ՈՉ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐ

Արտատարածաշրջանային ուժերի մասին խոսելիս նկատի ունենք օվկիանոսից այն կողմ գտնվող երկրներ, որոնք դեմոգրաֆիական (եւ այլ - խմբ.) խնդիրների առաջ չեն կանգնի: Այս մասին ապրիլի 16-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Հայաստանում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մեհդի Սոբհանին:

«Օվկիանոսի այն կողմից գալիս են այստեղ եւ փորձում են որոշումներ կայացնել այս տարածաշրջանի ժողովուրդների համար»,- նշել է նա:

Մեհդի Սոբհանին պարզաբանել է, որ խոսքը եվրոպական որոշ երկրների եւ ԱՄՆ-ի մասին է:

Նա պարզաբանել է, որ տարածաշրջանային երկրներ են համարվում Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Իրանը, Ռուսաստանը եւ Թուրքիան:

«Ռուսաստանը սահման ունի Կովկասի հետ, այն չի համարվում ոչ տարածաշրջանային երկիր»,- հավելել է դիվանագետը:

Հիշեցնենք, որ Իրանը բազմիցս դեմ է արտահայտվել Հարավային Կովկասի երկրների գործերին ոչ տարածաշրջանային երկրների միջամտությանը:

ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ

ԾԱՆՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ Է ՀԱՍՑՐԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արմեն Հարությունյանը 2008 թվականի սեպտեմբերի 7-ին Երեւանի Էրեբունի համայնքի ղեկավարի ընտրություններեր արդյունքում ընտրվել է Էրեբունի համայնքի ղեկավարի պաշտոնին, եւ պաշտոնավարել մինչեւ 2009 թվականի մայիսի 31-ը: 2009 թվականին Երեւան համայնքի կազմավորումից հետո՝ նույն թվականի մայիսի 31-ին կայացած Երեւանի ավագանու ընտրություններից հետո, Երեւանի քաղաքապետի պաշտոնը զբաղեցրած Գագիկ Քեզլարյանի կողմից նշանակվել է Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնին, որում պաշտոնավարել է մինչեւ 2017 թվականը:

2009 թվականին Երեւան քաղաքի Էրեբունի համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում Արմեն Հարությունյանը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի կարգով լիազորված լինելով նույն օրենքով եւ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով հրավիրել եւ վարել է ավագանու նիստեր, համայնքի ավագանու որոշմամբ եւ սահմանված պայմաններով՝ օգտագործման տրամադրել համայնքի սեփականություն համարվող գույքը, իր իրավասության շրջանակներում ընդունել որոշումներ, կազմել արձանագրություններ եւ արձակել կարգադրություններ. նույն օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով սահմանված կարգով՝ առաջարկություն ներկայացնել համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու, նույն օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ լիազորված լինելով համայնքի ավագանու՝ օրենքին հակասող որոշումների վերաբերյալ եռօրյա ժամկետում համայնքի ավագանուն ներկայացնել համապատասխան հիմնավորումներով գրավոր առարկություններ եւ առաջարկություններ, ՀՀ հողային օրենսգրքով եւ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության եւ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու, հանդիսանալով պաշտոնատար անձ՝ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ եւ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որն էական վնաս է պատճառել համայնքի օրինական շահերին. միաժամանակ նույն գործողություններն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ:

Մասնավորապես՝ Երեւանի, Լիոնի քաղաքապետերի եւ Մեծ Լիոնի նախագահի միջեւ 2008 թվականին ստորագրվել է ապակենտրոնացված համագործակցության համաձայնագիր, որով, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ ընդառաջելով Երեւանի քաղաքային ղեկավարների դիմումին՝ Լիոն քաղաքը որոշել է աջակցել Երեւան քաղաքին եւ Էրեբունի համայնքին, պարտավորվել է սուբսիդավորել Երեւան քաղաքին՝ ֆինանսավորելու «Վարդավառի» զբոսայգու («Լիոնի այգու») համար նախատեսված սարքավորումների ձեռք բերումը, բարեկարգման աշխատանքների իրականացումը, անհրաժեշտ պարագաների գնումը, կանաչ տարածքների կառավարումը, իսկ Երեւան քաղաքը պարտավորվել է ստանալ ֆոնդը եւ օգտագործել «Վարդավառի» զբոսայգու («Լիոնի այգու») ծրագրի իրականացման նպատակով: Ըստ նույն համաձայնագրի՝ որոշվել է դոտացիայից տրամադրել 15.000 եվրո կանխավճար, իսկ մնացորդ 80.000 եվրոն տրամադրել վճարված նախահաշիվների ներկայացման եւ աշխատանքների առաջընթացի պարագայում:

Այնուհետեւ, 2008 թվականի հոկտեմբերի 28-ին կայացել է մրցույթ, որի արդյունքում որոշվել է առաջարկել «Հայր եւ որդի Ադամյաններ» ՍՊ ընկերությանն իրականացնել «Վարդավառի» զբոսայգու («Լիոնի այգու») բարեկարգման աշխատանքները՝ առաջին փուլով տրամադրելով 15.828.648 ՀՀ դրամ:

2008 թվականի դեկտեմբերի 16-ին Երեւանի քաղաքապետի կողմից Էրեբունի համայնքի ղեկավար Արմեն Հարությունյանին տրվել է լիազորագիր՝ Էրեբունի համայնքի «Վարդավառ» զբոսայգում բարեկարգման աշխատանքների պատվիրատուի գործունեությունն իրականացնելու նպատակով: Հիշյալ լիազորագրի հիման վրա Արմեն Հարությունյանը 2009 թվականի հունվարի 20-ին «Հայր եւ որդի Ադամյաններ» ՍՊ ընկերության հետ կնքել է աշխատանքների գնման պայմանագիր, որի հիման վրա հիշյալ ընկերությունն իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքները:

Այնուհետեւ, Արմեն Հարությունյանը 2009 թվականի ապրիլի 2-ի եւ 23-ի գրություններով դիմել է Երեւանի քաղաքապետին՝ Երեւան քաղաքի Սասունցի Դավիթ 87 հասցեում գտնվող «Վարդավառ» զբոսայգու եւ լճի զբաղեցրած տարածքի սահմանների ճշգրտում կատարելու խնդրանքով, որի հիման վրա Երեւանի քաղաքապետի՝ 2009 թվականի մայիսի 27-ի թիվ 5360-Ա որոշմամբ չեղյալ է ճանաչվել Երեւանի քաղաքապետի՝ 2001 թվականի փետրվարի 22-ի թիվ 138 որոշման հիման վրա թողարկված գլխավոր հատակագիծը եւ սահմանվել նոր գլխավոր հատակագիծ, որով «Վարդավառ» զբոսայգու եւ լճի զբաղեցրած տարածքը 201200 քառակուսի մետրի փոխարեն նշվել է 179610 քառակուսի մետր:

Արմեն Հարությունյանի վերոհիշյալ գործողությունների արդյունքում էական վնաս է պատճառվել համայնքի օրինական շահերին, այն է՝ սահմանված կարգով մրցութային հանձնաժողով չձեւավորելու արդյունքում ՀՀ հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի կարգով չեն սահմանվել մրցույթի պայմաններ, այդ թվում՝ վճարի մեկնարկային չափ, չի կազմակերպվել եւ անցկացվել բաց մրցույթ, տարեկան վարձավճարի մեկնարկային նվազագույն՝ 12.500.856 ՀՀ դրամի փոխարեն արդեն իսկ Լիոն քաղաքի միջոցներով բարեկարգվող «Վարդավառ» զբոսայգին վարձակալությամբ «ԲԻԴԵՔ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ակնհայտ ցածր՝ 619.655 ՀՀ դրամ գումարով, ինչի արդյունքում խաթարվել է տեղական ինքնակառավարման մարմինների նորմալ գործունեությունը: Ավելին՝ Արմեն Հարությունյանի նույն գործողությունները համայնքի համար անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ, առանձնապես խոշոր չափերով՝ 166,336,724 ՀՀ դրամի գույքային վնաս՝ նկատի ունենալով, որ հետագա տարիներին վճարվել է տարեկան 619.655 ՀՀ դրամ վարձավճար, մինչդեռ «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները եւ սահմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշմամբ սահմանված բանաձեւով հաշվարկման արդյունքում վարձակալական հիմունքներով կառուցապատման իրավունքով համայնքի բյուջե առնվազն պետք է վճարվեր տարեկան 12.500.856 ՀՀ դրամ:

Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել եւ գործը ուղարկվել է դատարան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՉԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ «ՍԵՎ ՇՈՒԿԱ»

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նախաքննական մարմինը այս քրեական վարույթի շրջանակներում, ամենայն հավանականությամբ, հարցաքննության կիրավիրի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյասնին, քանի որ, ըստ նախնական տեղեկությունների, քրեական վարույթի շրջանակներում որոշակի փոխկապակցվածություն կա առողջապահության նախարարի գործունեության հետ:

ԱԱԾ-ն ու Քննչական կոմիտեն կոնկրետ քննություն են իրականացնում չգրանցված դեղերի եւ պետական պատվերի բաշխման գործընթացում առկա չարաշահումների մասով:

Հիշեցնենք, որ նախկինում Անահիտ Ավանեսյանը այլ քրեական վարույթով հարցաքննվել է:

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. ««Ժողովուրդ» օրաթերթն իր աղբյուրներից տեղեկացավ, որ Հակակոռուպցիոն կոմիտե է հրավիրվել եւ հարցաքննվել առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: Անցած տարի՝ օգոստոսի 2-ին, գրել էինք, որ հերթական ծանուցագիրն են նախապատրաստում. այս անգամ այն ուղարկելու են ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին: Վերջինս գնացել եւ հարցաքննվել է որպես վկա ու վերջ:

Արսեն Թորոսյանից հետո նախապատրաստվում էին լսել գործող նախարար Անահիտ Ավանեսյանին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Թորոսյանի հարցաքննությունից հետո նախաքննական մարմինը փակուղի էր մտել:

Ըստ էության, այդպես էլ եղավ: Առաջիկայում «քովիդ 2019»-ի քրեական վարույթի գործով նախաքննության ավարտ կհայտարարվի:

Հիշեցնենք, որ անցած տարի հակակոռուպցիոն կոմիտեն ակտիվ կերպով հարցաքննության էր հրավիրում «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի աշխատակիցներին:

Իսկ ի՞նչ քրեական վարույթի մասին է խոսքը. ըստ քրեական վարույթով ձեռք բերված տվյալների՝ «ՀՀ-ում նոր կորոնավիրուսային վարակի (Covid-19) կանխարգելման, վերահսկման, բուժման այլ համալիր միջոցառումների» իրականացման ծրագրով ՀՀ կառավարությունը հատկացրել է ավելի քան 26 մլրդ ՀՀ դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

Հիշյալ ծրագրի շրջանակում ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի հրամանով՝ հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության՝ «COVID-19»-ի ախտորոշման եւ բուժման դիմաց պետական բյուջեից փոխհատուցում ստացող, բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը, որում ներառվել է նաեւ «Մեդլայն Կլինիկ» ՍՊ ընկերությունը: ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանը հաճախ թիրախավորում է ուժայիններին՝ դատախազությանն ու քննչականին՝ մեղադրելով շոուներ կազմակերպելու համար»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 15-ից 16-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 107 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

ԲԵՐԴ ՔԱՂԱՔՈՒՄ 2 ԲԱՆԿՈՄԱՏ ԵՆ ԹԱԼԱՆԵԼ

Ապրիլի լույս 15-ի գիշերը Բերդ քաղաքի կենտրոնական՝ Մաշտոցի փողոցում գողացել են 2 բանկոմատների պարունակությունը: Բերդի բնակիչների ասելով՝ բանկոմատներից մեկում եղել է 900 հազար դրամ:

Այս գողությունները ուշագրավ են այն առումով, որ Մաշտոցի փողոցում միշտ ակտիվ երթեւեկություն է:

ԳՈՐԾԸ ԿԱՐՃՎԵԼ Է

Բերդ համայնքի նախկին ղեկավար Հարություն Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քրեական գործով ունենալով ամբաստանյալի դատավարական կարգավիճակ, 2022թ. մարտի 4-ին՝ ժամը 09:55-ի սահմաններում, իր նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխելու եւ որպես խափանման միջոց անձնական երաշխավորությամբ փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին որոշումը նախագահող դատավոր Սամվել Մարդանյանի կողմից հրապարակելուց՝ այն է՝ միջնորդությունը մերժելուց հետո, իր պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավորին վիրավորելու նպատակով նրա հասցեին հնչեցրել է վիրավորական արտահայտություն, այդ կերպ անհարգալից վերաբերմունք դրսեւորել դատարանի նկատմամբ: Սարգիս Մարգարյանին եւ Արկադի Յամուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք 2022թ. մարտի 4-ին՝ ժամը 09:55-ի սահմաններում, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Իջեւանի նստավայրում քննվող քրեական գործով Հ. Մանուչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը անձնական երաշխավորությամբ փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը նախագահող դատավոր Ս. Մարդանյանի կողմից մերժվելուց հետո իր պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավոր Ս. Մարդանյանին վիրավորելու նպատակով նրա հասցեին հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ այդ կերպ անհարգալից վերաբերմունք դրսեւորել դատարանի նկատմամբ: Ս. Մարգարյանը նախկինում Բերդ համայնքի ավագանու անդամ էր, այժմ Պառավաքար գյուղի վարչական ղեկավարն է, Ա. Յամուկյանը՝ Այգեպարի վարչական ղեկավարը: 2024թ. մարտի 12-ի դատական նիստում դատավոր Սերժ Ռուշանյանը որոշել է Հ Մանուչարյանի, Ս. Մարգարյանի, Ա. Յամուկյանի նկատմամբ 2023թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցված քրեական հետապնդումը դադարեցնել եւ գործի վարույթը կարճել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, նրանց նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնել: Դատարանի որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՒՂԵՐՁ

ԱՐՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՂՔԻՆ՝ ՆՈՐ ԱՆԵԼԻՔՆԵՐ

«Ոստիկանությունը միշտ հաղթահարու իրավունքների պաշտպանության, հասարակական կարգի ապահովման եւ հանցավորության դեմ պայքարի առաջնագծում է»:

Այս մասին երեկ հայտարարել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը՝ Ոստիկանության օրվա առթիվ տարածած իր ուղերձում: «Պետության դիմագծի՝ Ներքին գործերի նախարարությանն առնչվող պատասխանատու ծավալում միանշանակ կարող ենք արձանագրել էական բարեփոխումներ: Եվ սա միայն մեր գնահատականը չէ. սա հանրության անկախ կարծիքի, միջազգային գործընկերների փորձագիտական կարծիքի վրա հիմնված մոտեցում է: Սա ՀՀ Վարչապետի, Կառավարության բարձր հովանու, միջազգային գործընկերների կայուն աջակցության, ամենօրյա սերտ համագործակցության, հանրության վստահության, ինչպես նաեւ բարեփոխումների իրականացման հարցում ներքին գործերի նախարարության կամքի, վճռականության եւ ամենօրյա սրտացավ աշխատանքի արդյունքն է: Նախարարությունում այսօր ծավալուն բարեփոխումներ են իրականացվում: Նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված, տեխնիկապես հագեցած եւ բարեվարք ոստիկանության ձեւավորումն է: Նպատակը ծառայում է հանուն մարդու իրավունքների բարձր պաշտպանության, հանուն հանրային անվտանգության, հանուն Հայաստանում ժողովրդավարական հասարակարգի ինստիտուտների զարգացվածության ավելի բարձր նշաձողի: Պարեկային ծառայության ստեղծումը այդ նպատակին հասնելու առաջին քայլն էր, որի շրջանակներում ոստիկանության փորձառու ծառայողները եւ քաղաքացիական անձինք համախմբվել են՝նոր որակով ապահովելու ծառայությունը օրենքին, իրավակարգին եւ մեր հանրությանը: Այսօր արդեն ծառայությունը գործում է ամբողջ հանրապետությունում: Խորհրդանշական այս օրն ավարտվել է նաեւ Ոստիկանության հենասյունային ուղղություններից մյուսի՝ Քրեական ոստիկանության ձեւավորման համար անցկացվող ընդունելության փուլերից վերջինը՝ հարցազրույցների փուլը, որի արդյունքներով քաղաքացիական անձինք, այդ թվում՝ կանայք, գործող ոստիկանները կստանան նոր որակի կրթություն, եւ դրա արդյունքներով միայն կնշանակվեն համապատասխան պաշտոնների: Ջուգահեռաբար նախապատրաստական աշխատանքներ են տարվում ոստիկանության հենասյունային ուղղություններից Համայնքային ոստիկանության եւ Ոստիկանության գվարդիայի ձեւավորման ուղղությամբ, որի արդյունքները երկար սպասեցնել չեն տա: Կառավարությունը ջանք չի խնայել նաեւ ոստիկանության համակարգի սոցիալական երաշխիքների բարելավման ուղղությամբ: Արդեն իսկ գործում է ատեստավորման համակարգը, որը մի կողմից բարձրացնում է աշխատողի սոցիալական երաշխիքը, կրկնապատկում աշխատավարձը, մյուս կողմից համակարգը տանում է ինքնաճանաչման ճանապարհով, վեր հանում գիտելիքի, հմտության առկա բացերը, բարեվարքության հնարավոր խնդիրները: Ջանք չենք խնայում եւ չենք խնայելու նաեւ համակարգում կանանց ավելի մեծ ներկայացվածության համար, քանի որ կանանց ներկայությունն ապահովում է աշխատանքում նոր որակ, կարգապահության նոր մակարդակ, խնդիրների լուծման նոր մոտեցում: Հարգելի՛ ծառայողներ, ինչ խոսք, քայլերի այս շարքը կարելի է շարունակել, բայց պահպանելով զգոնությունը, չկորցնելով դրական փոփոխությունների համատեքստում մեր վերջնական նպատակին հասնելու ճանապարհը՝ ինքներս մեզ համար արձանագրում ենք, որ արված գործերի կողքին դեռեւս շատ անելիքներ, անընդհատ կատարելագործվելու կարիք ունենք, եւ այդ ուղղությամբ ամենօրյա ռեժիմով գործողություններ են իրականացվում: Եվս մեկ անգամ ցանկանում եմ վերահաստատել, որ անհանդուրժող ենք լինելու համակարգում կոռուպցիոն որեւէ դրսեւորման, ինչպես նաեւ ցանկացած տեսակի բռնության հանդեպ: Հարգելի՛ ոստիկաններ, Համոզված եմ, որ բարեփոխումների ընդգրկուն գործընթացների արդյունքում, բոլորիս ներդրած ջանքերի եւ սրտացավության շնորհիվ, ունենալու ենք այն Ոստիկանությունը, որն ի զորու կլինի լիարժեք կատարելու իրեն առաջադրված բոլոր խնդիրները: Հարյուրամյա պատմության ընթացքում այդ նպատակի իրականացմանն են իրենց անմնացորդ ծառայությունը բերել հազարավոր ոստիկաններ: Այդ նպատակի համար են մեր երկրի սահմանների պաշտպանության մարտերում ու ծառայողական պարտքը կատարելիս իրենց կյանքը զոհել հարյուրավոր ոստիկաններ: Հավերժ փառք ու խոնարհում նրանց պայծառ հիշատակին: Կրկին շնորհավորում եմ մասնագիտական տոնի առթիվ: Շնորհավորում եմ մեր սիրելի թոշակառուներին եւ մաղթում երկար ու անխռով տարիներ: Շնորհավորում եմ ոստիկանական ընտանիքներին, որոնք ոստիկանի աշխատանքի բարդությունն ու ծանրությունը զգացող առաջնային օղակն են: Հիշե՛ք, ձեզնից յուրաքանչյուրի աշխատանքի արդյունքով է գնահատվում Ոստիկանությունը, ձեզնից յուրաքանչյուրի աշխատանքի արդյունքով է գնահատվում նաեւ մեր պետությունը՝ Հայաստանի Հանրապետությունը: Եղե՛ք ձեր կոչմանն արժանի եւ հավատարիմ: Արժանապատիվ եւ անփորձանք ծառայություն եմ մաղթում բոլորիդ»,- ասված է ուղերձում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՇԻՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

ԱՅՍՕՐ ԿՊԱՅԹԵՑՎԻ ՊՆ ՆԱԽԿԻՆ ՇԵՆՔԸ

Երեկ՝ առավոտից, մամուլում լուրեր էին տարածվում, որ Երեւան-Ագարակ ճանապարհին գտնվող պաշտպանության նախարարության նախկին շենքում տեւական ժամանակ է՝ բանդման աշխատանքներ են իրականացվում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ դրանք նախապատրաստական աշխատանքներ են, եւ որ այսօր՝ առավոտյան ժամը 11-ին, պաշտպանության նախարարության նախկին շենքը պայթեցվելու է:

Մինչ այս հայտնի էր, որ նախորդ տարի շենքի բնակիչներին վտարելուց եւ տարածքը ՊԵԿ-ին փոխանցելուց հետո, կառավարությունը նշված հատվածում լայնամասշտաբ շինարարական աշխատանքներ է պատրաստվում իրականացնել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ իշխանության տեղափոխումների ծրագրում է նաեւ ՊԵԿ-ը եւ նրան ենթակա բոլոր կառույցները տեղափոխել այդ տարածքում ապագայում կառուցվելիք շինություն:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 4 պատահար. 1 մարդ զոհվել է, 8-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿՎԵԼՈՒ Է ՄՈՏ 44.000 ՄԱՐԴ

Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրի համաձայն՝ ակադեմիական քաղաքը կառուցվելու է Երեւանի 17-րդ թաղամասին հարող մոտ 680 հա տարածքում, որը սահմանակից է Արմավիրի, Արագածոտնի եւ Կոտայքի մարզերին: Ըստ նախանշվածի՝ ակադեմիական քաղաքի տարածքում հնարավոր կլինի տեղակայել մինչեւ 16 բուհ՝ օրենքով նախատեսված մինչեւ 8 պետական խոշորացված բուհ եւ մինչեւ 8 ոչ պետական կամ միջազգային բուհ:

Համաձայն ներկայացված հայեցակարգի՝ ակադեմիական քաղաքում առաջին փուլով նախատեսվում է գործարկել բուհական կլաստերներից չորսը՝ կրթական, արվեստների, տեխնոլոգիական, սպայական ուղղություններով: Նշված կլաստերներում եւ դրանց հարակից տարածքներում, նախնական հաշվարկով, աշխատելու եւ բնակվելու է մոտ 44 հազար մարդ:

Նախագծման աշխատանքները նախատեսվում են ավարտին հասցնել 2025 թվականի աշնանը, որից հետո մեկնարկելու է կառուցապատման առաջին փուլը. նախնական գնահատմամբ՝ առաջին փուլի աշխատանքները կավարտվեն 2030 թվականին:

«Սա ապագայի նախագիծ է՝ հետագա 30 կամ գուցե 50 տարվա համար: Բնականաբար, այս ամբողջ նախագիծը չի կարող միանգամից իրականացվել: Ես հույս ունեմ՝ առաջին բուհը կարող է ակադեմիական քաղաք տեղափոխվել 5-7 տարի հետո»,- նախօրեին Մատենադարանում ասել է գերմանական gmp International GmbH Architects and Engineers ճարտարապետական ընկերության փոխտնօրեն Թոբիաս Քեյլը:

Ի դեպ, բարձրագույն կրթության ոլորտում՝ որպես նոր նախաձեռնություն, նախատեսվում է «Ակադեմիական քաղաք» ծրագրին հատկացնել 2.1 մլրդ դրամ, որը հետագայում աստիճանաբար կմեծանա:

Բայց իշխանությունն այնպիսի ֆիևր ակցիաներ ու շոուներ է կազմակերպում, այնքան հաճախականությամբ է այս քաղաքի մասին խոսում, որ կարելի է կարծել, թե 2025 ուսումնական տարին բուհական ու ակադեմիական համակարգը դիմավորելու է նոր պայմաններում՝ 17-րդ թաղամասում:

ՏԱՐԱԾՔ ՆՎԻՐԱԲԵՐՎԵՑ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ

«Գաֆէսճեան» ժամանակակից արվեստի կենտրոնը Երեւանին նվիրաբերեց Կասկադ համալիրի վերնամասում գտնվող 5105 քմ հողամասերը եւ դրանցում առկա շինությունները: Նվիրատվություն ընդունելու որոշումն այսօր ընդունվեց ավագանու նիստի ժամանակ:

Որոշման մեջ նշվում է, որ անշարժ գույքերը նվիրաբերվում է Երեւանին պայմանով, որ նշված տարածքներում կառուցապատման աշխատանքներ չեն կատարվելու, այլ անձանց չեն փոխանցվելու եւ օգտագործվելու են միայն բարեկարգման նպատակով:

ՆՈՐ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՋՆԻՎ Է

Ցեղասպանության, ինչպես նաեւ մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելումը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից են:

Ազգային ժողովի արտահերթ նիստում այս մասին ասաց արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը՝ օգոստոսի 3-ը Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին նախագծի քննարկման ժամանակ:

Նրա խոսքով՝ Հայաստանի Հանրապետությունը թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ համագործակցային հարթակներում ակտիվորեն աջակցում է հիշատակված հանցանքների կանխարգելմանն ու դատապարտմանն ուղղված միջոցառումներին, ցեղասպանությունների եւ այլ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման գործիքների եւ մեխանիզմների հետագա մշակման գործընթացներին:

«Բոլորովին վերջերս՝ ապրիլի 3-ին, Միացյալ ազգերի կազմակերպության մարդու իրավունքների խորհրդի կողմից կոնսենսուսով ընդունվեց Հայաստանի կողմից ներկայացված «Ցեղասպանության կանխարգելում» երկամյա բանաձեւը: Նշված բանաձեւը, ինչպես նաեւ մեր երկրի այլ նախաձեռնությունները կարեւոր դեր են խաղում ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման միջազգային օրակարգն ամրապնդելու հարցում, հիշատակված ոլորտում Միացյալ ազգերի կազմակերպության կառույցների եւ մարմինների համագործակցությունն ինստիտուցիոնալացնելու եւ մարդու իրավունքների կոպիտ խախտումների ժամանակից մարտահրավերները հասցեագրելու ուղղությամբ»,- ասաց Հովհաննիսյանը:

ԱԳ նախարարի տեղակալն ընդգծեց՝ Հայաստանը տարիներ շարունակ ամենատարբեր միջազգային հարթակներում բարձրաձայնել է եզդիների նկատմամբ իրագործված հանցանքների մասին:

«2018 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է ահաբեկչական խմբավորումների կողմից իրենց վերահսկողության ներքո գտնվող Իրաքի Հանրապետության տարածքներում եզդի ժողովրդի նկատմամբ 2014 թվականին իրականացված ցեղասպանության դատապարտման մասին հայտարարությունը:

Հիշատակված հայտարարության ընդունումը պայմանավորված է եղել եզդի ժողովրդի հանդեպ տեղի ունեցած ոճրագործությունը որպես ցեղասպանություն որակելու, ինչպես նաեւ նման ծանր հանցագործությունները կանխարգելելու, մեղավորներին պատժելու եւ ժողովրդին հատուցում տրամադրելու խնդրի աջակցման կաեւորությամբ»,- ասաց Հովհաննիսյանը:

Նա հատկանշական է համարում այն, որ Իրաքի Հանրապետությունը 2021 թվականի մարտին ընդունված օրենքով ճանաչել է եզդիների եւ այլ փոքրամասնությունների ցեղասպանությունը եւ օգոստոսի 3-ն ամրագրել է որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

«Սույն նախագծի ընդունումը եւ օգոստոսի 3-ը 2014 թվականի Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր ճանաչելու նախաձեռնությունը կարեւոր քայլ է հիշյալ հարցում Հայաստանի կողմից վարվող սկզբունքային քաղաքականությունը եւ մոտեցումները եւս մեկ անգամ արտահայտելու, հայ-եզդիական բարեկամական կապերն ամրապնդելու, ինչպես նաեւ եզդի ժողովրդին աջակցություն հայտնելու տեսանկյունից:

Կարծում ենք, որ ցեղասպանությունների ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված հիշատակի եւ ոգեկոչման օրերը եւ միջոցառումները կարեւոր են ոչ միայն ժխտողականության դեմ պայքարի, կանխարգելման եւ կրկնությունից խուսափելու, այլ ամենադժվարին հարցերի շուրջ երկխոսության եւ համերաշխության մթնոլորտ ձեւավորելու հնարավորության տեսանկյունից»,- եզրափակեց Հովհաննիսյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

2024 թվականի մայիսի 6-ին գումարվելու է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողովը՝ համատեղ ներկայության կարգով հիբրիդային ձեւաչափով՝ Holiday Inn հյուրանոցի «Արտաշատ» սրահում՝

ՀՀ, քաղաք Երեւան,

Ամիրյան փողոց 2 հասցեով եւ Zoom հավելվածի միջոցով:

Մասնակիցների գրանցումը՝ Երեւանի ժամանակով սկսած ժամը 13:00-ից:

Ժողովի անցկացման սկիզբը՝ ժամը 13:40-ին:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ». ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

2024թ.-ի ապրիլի 29 -ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 20 լոտ՝ ոսկյա ջարդոն 27 գր. ընդհանուր քաշով, որից 12.5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 11.3 գր.) 500 հարգի՝ 164.700 ՀՀ դրամ, 14.5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 13.5 գր.) 585 հարգի՝ 233.400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 398.100 ՀՀ դրամ: Թիվ 21 լոտ՝ոսկյա ջարդոն 7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 6 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 103.700 ՀՀ դրամ: Թիվ 22 լոտ՝ ոսկյա ջարդոն 8.5 գր. ընդհանուր քաշով, որից 4.5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 4.3 գր.) 958 հարգի՝ 121.900 ՀՀ դրամ, 4 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 3.9 գր.) 585 հարգի՝ 67.400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 189.300 ՀՀ դրամ: Թիվ 23 լոտ՝ ոսկյա ջարդոն 10.9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 155.500 ՀՀ դրամ: Թիվ 24 լոտ՝ ոսկյա զարդ 7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 6.9 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 119.000 ՀՀ դրամ: Թիվ 25 լոտ՝ ջարդոն 56.7 գր. ընդհանուր քաշով, որից 43.6 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 41.6 գր.) 585 հարգի՝ 719.000 ՀՀ դրամ, 13.1 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 11 գր.) 500 հարգի՝ 160.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 879.000 ՀՀ դրամ: Թիվ 26 լոտ՝ ոսկյա ջարդոն 14.9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 12.8 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 221.200 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ. +374 43 00 42 27

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՈՂՈՎՈՒՐԴ www.ArmLur.am

ՉԱՐԼԻ ՉԱՊԼԻՆ

ՀՈՒՄՈՐԻ ՀՍԿԱՆ, ՈՐԸ ՓՈԽԵԼ Է ԱՇԽԱՐՀԸ

Անգլիացի հայտնի կինոդերասան, կատակերգու, սցենարիստ, երգահան եւ ռեժիսոր, *թափառաշրջիկ Չարլի Չապլինի* կերպարի ստեղծող Չարլզ Սփենսեր Չապլինը ծնվել է 1889 թվականի ապրիլի 16-ին:

Դժվար պայմաններում մեծացած դերասանը, ով 75 տարի մասնագիտական գործունեություն է ծավալել, վաղ տարիքից դերեր է ստանձնել եւ բեմ բարձրացել այն բանից հետո, երբ իր 14 տարեկանում մորը տեղափոխել են հոգեբուժարան:

19 տարեկանում տեղափոխվում է ԱՄՆ եւ առաջին քայլերն անում «Քիստոուն» Ստուդիայի հետ՝ նկարահանվելով «Կեցություն ստեղծելով» ֆիլմում: Չապլինն ինքն է գրել, խմբագրել, խաղացել եւ հանդես եկել որպես ռեժիսոր, պրոդյուսեր, երգահան՝ իր ֆիլմերից շատերի համար:

1914 թվականին Չիկագոյի ֆիլմարտադրող «Էսսենեյ» ընկերությունը Չապլինին համագործակցության առաջարկ է անում շաբաթական 1250 դոլար վարձատրությամբ, որից բացի պիտի ստանար նաեւ 10 հազար դոլար ամսական հավելավճար: Ստուդիայում Չապլինը իր դերասանական թիմն է հավաքում եւ ակտիվ գործունեություն սկսում, որին հաջորդում է «Մյուչուալի» հետ պայմանագիրը՝ տարեկան 670 հազար դոլար արժողությամբ: Հաջորդը First National-ի հետ համագործակցությունն էր, որի հետ պայմանագրի ավարտից հետո Չապլինը նկարահանում է իր առաջին անկախ կինոնկարը՝ «Փարիզուհին»:

1952 թվականին Չապլինը վերադառնում է Լոնդոն, որտեղ պիտի ներկայացներ իր կյանքի մասին պատմող «Բեմի լույսերը» ֆիլմը, եւ նրան թույլ չեն տալիս վերադառնալ Միացյալ Նահանգներ: Հասկանալ նրան, որ նա կարող էր դիմել եւ վերականգնել մուտքի թույլտվությունը, նա խզում է ԱՄՆ-ի հետ իր բոլոր կապերը:

Չապլինը մահանում է 1977 թվականին իր տանը: Նեղ շրջանակով կայացած թաղման արարողությանը դերասան Բոբ Հոուփը նշել է. «Մենք բախտավոր էինք, որ նրա ժամանակաշրջանում էինք ապրում»:

Չապլինին նվիրված հուշարձաններ կան Միացյալ թագավորությունում, Սլովակիայում, Լեհաստանում, Իռլանդիայում, Հնդկաստանում, Իտալիայում, Իսպանիայում եւ Շվեյցարիայում:

Չապլինի մասնագիտական եւ ոլորտային գործունեությունը շարունակել են նրա ընտանիքի անդամներից շատերը, սակայն ամենահայտնիներից է թոռնուհին՝ դերասանուհի Ունա Չապլինը, ով Չապլինի դստեր՝ դերասանուհի Ջերալդին Չապլինի եւ կինեմատոգրաֆիստ Պատրիսիո Կաստիլիայի դուստրն է, ինչպես նաեւ Գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիր Յուջին Օ՚Նիլի (Չապլինի աներոջ) ծոռնուհին:

Դերասանուհուն Ունա են անվանել ի պատիվ տատիկի՝ Չարլի Չապլինի վերջին կնոջ: Դերասանուհին, որը ծնվել եւ մեծացել է Մադրիդում, ավարտել Թատերարվեստի թագավորական ակադեմիան ու մասնագիտական գործունեությունը սկսել «Ուրվականներ» սերիալում խաղացած էպիզոդիկ դերով, ապա խաղացել «Գահերի խաղ» սերիալում, որում իր մարմնավորած դերի համար առաջադրվել է «ԱՄՆ կինոդերասանների գիլդիա» մրցանակաբաշխության «Լավագույն դերասանական կազմ դրամատիկական սերիալում» անվանակարգում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ 25»

ԷՆԻՈ ՄՈՐԻԿՈՆԵԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում մայիսի 26-ին «Երեւանյան հեռանկարներ» 25-րդ միջազգային երաժշտական փառատոնի հանդիսատեսը հնարավորություն կունենա վայելելու մշակութային սահմանները ճեղքող անմոռանալի համերգ:



Առաջին անգամ Հայաստանում #MorricconeConductsMorricone խորագրի ներքո կհնչեն լեգենդար օսկարակիր կոմպոզիտոր Էնիո Մորիկոնեի խորհրդանշական ստեղծագործությունները:

Մորիկոնեի հավերժական մեղեդիներն ու գրավիչ մշակումները կհնչեն Roma Sinfonietta նվագախմբի կատարմամբ եւ կոմպոզիտորի որդու՝ Անդրեա Մորիկոնեի ղեկավարությամբ: Բացառիկ ու շքեղ երեկոյին միանալու է նաեւ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը՝ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ:

Գրեթե վեց տասնամյակի հարուստ պատմություն ունեցող երգչախումբը միջազգային ճանաչում է ստացել Կոմիտասի, հայ դասական կոմպոզիտորների եւ համաշխարհային վարպետների ստեղծագործությունների անթերի կատարմամբ: Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ երգչախումբը հասել է կատարողական բարձր մակարդակի, արժանացել հեղինակավոր տիտղոսների եւ բազում մրցանակների: Երգչախմբի երգացանկը մշտապես գերել է հանդիսատեսին ամբողջ աշխարհում եւ արժանացել է գովասանքի այնպիսի հեղինակավոր պարբերականների կողմից, ինչպիսիք են Le Figaro, The New York Times, The Boston Globe, Le Monde, The Independent, Paris Match, Meridional, Los Angeles Times, Macedonia, Le Soir, La revue du Liban, Le provencal:

Roma Sinfonietta նվագախմբի եւ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի միջեւ այս պատմական մշակութային համագործակցությունը խոստանում է համերգը վերածել անզուգական երաժշտական իրադարձության՝ խանրաճանաչ կոմպոզիտորի ստեղծագործությունները հանդիսատեսին ներկայացնելով գեղարվեստական նորարարությամբ ու հետաքրքիր լուծումներով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԻՄԸ ՀԱՅՏՆԻ Է

ԱՄՆ բասկետբոլի հավաքականի վերջնական կազմը, որով թիմը կմասնակցի Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերին, հայտնի է:

Ըստ ամերիկյան պարբերականների՝ թիմում կլինեն Լեբրոն Ջեյմսը, Քեւին Դյուրանտը, Ստեֆան Քարին, Ջոել Էմբիդը, Ջեյսոն Տատումը, Դեյվին Բուկերը, Ջերու Հոլիդեյը, Էնտոնի Դեյիսը, Բամ Ադեբայոն, Էնտոնի Էդվարդսը, Թայլիզ Հալիբըրթոն:

Բասկետբոլիստ Լեբրոն Ջեյմսը ԱՄՆ օլիմպիական հավաքականի կազմում հանդես է գալիս 2012 թվականից, իսկ Ստեֆան Քարին երբեք հանդես չի եկել օլիմպիական ընտրանու կազմում: ԱՄՆ բասկետբոլի թիմը Օլիմպիական խաղերի 16-ակի հաղթող է:

Փարիզի Օլիմպիական խաղերում բասկետբոլի մրցաշարը կմեկնարկի հուլիսի 27-ին եւ կեզրափակվի օգոստոս 11-ին:

ՈՒՆԵՆ ՆՈՐ ՄԱՐԶԻՉՆԵՐ

Հայաստանի բասկետբոլի տարբեր տարիքային հավաքականներում տեղի են ունեցել մարզչական նշանակումներ:

2024 թվականի ամռանը կայանալիք Եվրոպայի C դիվիզիոնի առաջնությունում կանանց՝ Հայաստանի մինչեւ 16 տարեկանների հավաքականը կգլխավորի Ալբերտ Հարությունյանը: Հարությունյանի գլխավորությամբ «Հատիսը» դարձել է Հայաստանի կանանց առաջնության 2023/2024 մրցաշրջանի փոխչեմպիոն: Կանանց Մ16 տարեկանների հավաքականը ընդգրկվել է A ենթախմբում, որտեղ կմրցի Վրաստանի, Ադրբեջանի եւ Կիպրոսի հավաքականների հետ: Հանդիպումները կկայանան 2024 թվականի հուլիսի 9-ից 14-ը Ջիբրալթարում:

Իսկ կանանց՝ Հայաստանի մինչեւ 18 տարեկանների հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում է նշանակվել Հայաստանի հավաքականի նախկին խաղացող Արտյոմ Թավակալյանը: Նրա գլխավորությամբ «Փոքսիսը» նվաճել է կանանց Հայաստանի 2023/24 մրցաշրջանի չեմպիոնի տիտղոսը: Կանանց Մ18 տարեկանների հավաքական ընդգրկված է C դիվիզիոն B ենթախմբում, որտեղ կմրցի Ալբանիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի թիմերի հետ: Հանդիպումները տեղի կունենան հուլիսի 23-ից 28-ը Կոսովոյի Պրիշտինա քաղաքում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ

Հայաստանի ֆուտբոլի գավաթի խաղարկության եզրափակիչի օրը հայտնի է:

Այս մասին հայտնում է Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան: Հայաստանի գավաթի խաղարկության եզրափակիչ էին դուրս եկել «Արարատ-Արմենիա» եւ «Ուրարտու» ակումբները՝ կիսաեզրափակիչներում համապատասխանաբար հաղթելով «Փյունիկ»-ին եւ «Շիրակ»-ին:

«Արարատ-Արմենիա»-«Ուրարտու» եզրափակիչ հանդիպումը կկայանա մայիսի 12-ին Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում:

● *Ապրիլի 19-ին՝ ժամը 15:00-ին, Պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Խենթը» ներկայացումը՝ ըստ Րաֆֆու համանուն վեպի: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Մետաքսյա Մարգարյան (25 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիմողի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտնում ենք, որ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կարող են արդյոք պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրվել կառուցապատման իրավունքով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչպես կարող է տնօրինվել հողամասի կառուցապատման իրավունքը:

Հունան Մուրադյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից: Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաեւ կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանի Պուշկին 62 հասցեում երեկ՝ ապրիլի 16-ին, պաշտոնապես բացվեց Երվանդ Քոչարի «Ընդվզում» ստեղծագործության մուրալը: Այն նվիրված է մեծանուն նկարչի 125-ամյակին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______
Ազգանուն՝ ______
Առաքման հասցե՝ ______
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 5 / +15 + 20	
Կոտայքի լեռներ	+ 2 + 5 / +15 + 19	
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 / +20 + 22	
Գեղարքունիք	+ 2 + 5 / +15 + 18	
Լոռի	+ 5 + 7 / +22 + 25	
Տավուշ	+ 7 + 10 / +23 + 26	
Արագածոտնի լեռներ	+ 2 + 5 / +14 + 18	
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 9 / +19 + 23	

Արարատ	+10 + 12 / +25 + 27	
Արմավիր	+ 8 + 10 / +25 + 27	
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4 / +15 + 19	
Վայոց ձորի նախալեռներ	+10 + 13 / +24 + 27	
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 / +24 + 26	
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 / +18 + 21	
ԼՂՀ	+ 2 + 7 / +17 + 20	
Երեւան	+ 13+ 15 / + 20 + 22	

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*